ՑՈՒԼԱԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1 Եվրոպական քաղաքակրթության ձևավորման նախադրյալները

Անցած հարյուրամյակում իր երկարատև պատմության ընթացքում Եվրոպային բաժին ընկած ամենածանր փորձությունները. Այն վերապրեց երկու արյունալի պատերազմներ, քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամեր, հաղթահարեց բռնատիրության ծանր լուծը, ցեղասպանության արհավիրքներ, հակադիր հասարակական համակարգերի և ռազմական դաշինքների միջև առճակատումներ: Եվ, այնուհանդերձ, երկու համաշխարհային պատերազմներից հետո Եվրոպան կարողացավ կարճ ժամանակահատվածում վեր հառնել փլատակներից, շարժվել դեպի միասնություն ու վերստին դառնալ համաշխարհային քաղաքակրթության ամենաբարգավաճ օջախներից մեկը:

Մեր օրերում Եվրամիությունը հասել է խորապես ինտեգրված պետությունների միասնության ստեղծմանը՝ համընդհանուր վերազգային կառավարման համակարգով, միասնական պաշտպանական քաղաքականությամբ, դրամական միավորով ու ընդհանուր տնտեսական և սոցիալական տարածությամբ: Այդ գործընթացի ընթացքում Եվրամիությունը ստիպված էր հաղթահարել կենտրոնամետ ու կենտրոնախույս ուժերի միջև առկա սուր հակամարտությունը: Այնուհանդերձ, եվրոպական ինտեգրման գործընթացը վերջին տասնամյակներում որևէ էական հետընթաց չի արձանագրել. Եվրամիությունը հաջողությամբ է լուծել նաև տնտեսապես համեմատաբար թույլ զարգացած պետությունների հաշվին իր կազմն ընդլայնելու խնդիրը:

Ներկա աշխատանքում փորձ է արվում վերլուծել եվրոպական քաղաքակրթության ձևավորման նախադրյալներն ու զարգացման հիմնական փուլերը, գնահատել նրա տեղն ու դերը համաշխարհային զարգացումներում, հետազոտել Եվրոպայի միավորման գործընթացի ակունքները և առկա իրավիճակը, ինչպես նաև փորձել կանխատեսել Եվրոպայի դերակատարությունը համաշխարհային քաղաքակրթության հետագա զարգացման մեջ:

Երկրագնդի վեց մայրցամաքներից Եվրոպան ամենափոքրն է մակերեսով /10,5 մլն քառակուսի կմ - երկրագնդի ցամաքի 7%-ը/, սակայն ամենախիտ բնակեցվածը /724 մլն մարդ - երկրագնդի բնակչության 12,3%-ը/: Բնակչության թվաքանակով այն մեծապես զիջում է Ասիային, որտեղ ապրում է մարդկության կեսից ավելին /միայն Չինաստանում և Հնդկաստանում՝ բնակչության 1/3-ը/,

սակայն դեռ գերազանցում է Աֆրիկայի, Ամերիկայի ու Ավստրալիայի բնակչությանը[1]:

Յուրաքանչյուր մեծ քաղաքակրթական կենտրոնի տեղն ու դերը տարբեր ժամանակահատվածներում կախված է երկակի նշանակության գործոններից: Մի կողմից դրանք նյութական ներուժը օբյեկտիվորեն բնութագրող մեծություններն են՝ տարածքը, բնական պաշարները, կլիման, ազգաբնակչությունը, մյուս կողմից՝ սուբյեկտիվ, մոտիվացիոն գործոնները. արտադրության ձևերը, սոցիալական կառուցվածքը, հոգևոր արժեքների համակարգը: Երկու դեպքում էլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների դերը միշտ չէ, որ նույնանում է. երբեմն շոշոփելի նյութական ներուժը մնում է չիրացված, եթե բացակայում են դրանք առաջ մղող ուժերը և օգտագործման շարժառիթները: Վերջիններս էլ, իրենց հերթին, ամբողջությամբ կարող են փոխհատուցել նյութական ներուժի սահմանափակությունը:

Որոշ հեղինակներ[2] երեք հարյուրամյակների ընթացքում եվրոպական քաղաքակրթության՝ աշխարհում բացառիկ դերի պատճառները համարում են նախևառաջ նրա բնական հարստությունները, որոնք պայմանավորել են նրա արագ առաջընթացը, այն դեպքում, երբ ուրիշ քաղաքակրթությունների զարգացման համար խոչընդոտ են եղել շոգը, ցուրտը կամ տարբեր հիվանդությունները: Միևնույն ժամանակ, ուրիշները[3] վկայակոչում են եվրոպացիների կողմից այլ քաղաքակրթությունների մտավոր և տեխնիկական նվաճումները յուրացնելու ու կիրառելու հանգամանքը /հայտնի է, օրինակ, որ թուղթը, կողմնացույցը, վառոդը, ճենապակին, մետաքսը Եվրոպա են ներմուծվել Չինաստանից, բազմաթիվ մաթեմատիկական հասկացություններ՝ Հնդկաստանից, բժշկական նորարարություններ՝ արաբներից և այլն/. Այդ նվաճումները խթանում էին եվրոպացիների ստեղծագործական միտքը՝ ապահովելով, ըստ ֆրանսիացի փիլիսոփա Բերգսոնի երկու անհրաժեշտ նախադրյալ քաղաքակրթության զարգացման համար, այդ թվում՝ «մի խումբ մարդկանց ջանքերը ստեղծելու նորը ու մյուսների ճիգերը ընդունելու և յուրացնելու այդ ամենը»[4]: Ըստ պատմաբան Լ. Գումիլյովի, Արևմտյան Եվրոպան տակավին 9-րդ դարում է սկսել բյուրեղանալ և ընդունել այն «տեսքը», որի ականատեսն ենք մենք

---

[1] http: //www.uv.es/cde/euinternet

[2] Cox R.W., "Social forces, states and world orders: beyond international relations theory". Millenium: Journal of International Studies, 1981. ; Reus Smit C., "Realist and resistance utopias: community, security and political action in the new Europe", Millenium: Journal of International Studies, 1992

[3] Frank A.G., "A theoretical introduction to 5000 years of world system history", Review, 1990. ; DePorte A.W., "Europe between the Super-Powes: the Enduring Balance". London, 1986

[4] "Европа вчера, сегодня, завтра", под ред. Н. И. Шмелева, М., 2002, с. 16.

ներկայում: «Եվ հենց նրան է բնութագրական այն, ինչն անհայտ է մյուսների համար, այն է ազգային սկզբունքը: "Natio" եզրույթը լատիներեն ծնունդ է նշանակում: Ծնունդը, լեզուն և տարածությունը միավորվել են այդ տերմինի մեջ. Սակայն դրա գիտակցումը բնութագրական էր միայն արևմտաեվրոպացիների համար...»[5]: Կան նաև հեղինակներ[6], որոնք նախապատվությունը տալիս են հասարակական գործընթացներին՝ այն իրողությանը, որ Եվրոպայում տնտեսության մեջ համեմատաբար վաղ են արմատավորվել շուկայական հարաբերությունները՝ ավատատիրական խոչընդոտներից ձերբազատվելու միջոցով ու այդ հիմքի վրա հաստատվել են արտադրության կապիտալիստական ձևերը՝ հզոր խթան հանդիսանալով գիտության ու տեխնիկայի զարգացման համար:

Կա նաև հակադիր կարծիք[7]. առարկելով նրանց, ովքեր Եվրոպական քաղաքակրթության վերելքը պայմանավորում են բարենպաստ բնակլիմայական պայմանների առկայությամբ, անգլիացի պատմաբան և հասարակագետ, Լոնդոնի Միջազգային հարաբերությունների թագավորական համալսարանի տնօրեն Առնոլդ Թոյնբին՝ եվրոպական քաղաքակրթության զարգացման հիմքում տեսնում էր այլ պատճառներ. բնական խոչընդոտները հաղթահարելու համար մշտական ջանքերի գործադրումը, թշնամիների հարձակումներին հաջողությամբ դիմագրավելը /ռազմական տեխնիկան ու ներուժը, որոնցով եվրոպացիները, անցնելով հազարամյակների երկպառակությունների ու պատերազմների միջով, 20-րդ դարասկզբին գերազանցում էին այլ մայրցամաքների բնակիչներին/ և այլն, որոնք հզոր խթան են հանդիսացել քաղաքացիական ներուժի զարգացման համար: Բնական ու մշակութային բազմազան պայմաններում գտնվող եվրոպական երկրներում նշված գործոնների առկայությունը մշտապես խթանել է աշխատանքի բաժանումը, արտադրության մասնագիտացումն ու առևտուրը:

Վերոնշյալ տեսակետներից որևէ մեկին ի վնաս մյուսների նախապատվություն տալը անարդարացի է, քանի որ դրանցից յուրաքանչյուրն իր մեջ ճշմարտության տարր է պարունակում: Բայց դրանք բոլորն էլ համընկնում են մարդկային գործոնի վճռորոշ դերի խնդրում՝ ոչ թե ռասայական կամ ազգային, այլ մշակութահոգեբանական: «Քաղաքակրթություն» հասկացության սահմանումը ֆրանսիական «Լառուս» հանրագիտարանային բառարանում հնչում է

---

[5] Л. Гумилев, "Конец и вновь начало", М., 2002, с. 135.
[6] Tilly C., "The Formation of National States in Europe", Princeton, 1975. ; Abu-Lughod J.L., "Before European Hegemony: the world system A.D. 1250-1350", Oxford, 1989.
[7] А. Дж. Тойнби, "Постижение истории", М., 2004, с. 149-154.

հետևյալ կերպ. «հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակ, որը բարձրագույն նպատակ է համարվում մյուսների համար»[8]: Այս սահմանումից հետևում է, որ յուրաքանչյուր պատմական փուլում համաշխարհային քաղաքակրթության առաջընթացի չափանիշ է համարվում որոշակի քաղաքակրթական մոդել՝ իր արժեքային համակարգով, շարժիչ ուժերով, կոնկրետ արդյունքներով, որն էլ կոչված է օրինակ ծառայելու մյուսների համար:

Եվրոպական քաղաքակրթությունը, ձևավորվելով շուրջ երեք հազարամյակների ընթացքում, անցել է մի շարք հաջորդական փուլերով, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին անջնջելի հետք է թողել: Դրա ընդհանուր ակունքներից են համարվում հունական փիլիսոփայությունն ու արվեստը, հռոմեական պետությունն ու իրավունքը, քրիստոնեական հավատը: Բոլոր եվրոպացիների համար այդ ընդհանուր քաղաքակրթական ժառանգությունը բնավ չի վերացնում նրանց միջև եղած էական տարբերությունները: Բոլոր համաշխարհային քաղաքակրթությունները, նույնիսկ էթնիկական, մշակութային և կրոնական առումներով համեմատաբար միատարրները, ձևավորվել են կենտրոնամետ ու կենտրոնախույս ուժերի երկարատև պայքարի արդյունքում, որի ընթացքում վերջինները մերթ տարանջատվել են, մերթ՝ կրկին միավորվել: Ընդ որում, արևմտաեվրոպական քաղաքակրթությունն իր առաջացման պահից ի վեր ուղեկցվել է ներքին խոր հակասություններով: Ինչպես իրավացիորեն նշել է անգլիացի պատմաբան Ռ. Բրաունը՝ «Եվրոպայի ակունքները «կռվել-կռփվել» են պատերազմի գնդանի վրա[9]»:

Արևմտաեվրոպական քաղաքակրթության ձևավորման սոցիալական պայմանները պայմանավորված էին առաջին հերթին անտիկ ժառանգության երկարատև ու խոր ազդեցությամբ: Այդ հանգամանքը բացատրվում էր նաև աշխարհագրական գործոնի առկայությամբ, քանի որ հունահռոմեական աշխարհի հիմնական կենտրոնները գտնվում էին Արևմտյան Եվրոպայի անմիջական հարևանությամբ: Անտիկ ժառանգության համար կարևորագույն տարր հանդիսացավ քրիստոնեությունը՝ դառնալով արևմտաեվրոպական քաղաքակրթության հոգևոր հիմքը:

Քաղաքակրթական զարգացման հիմնարար փուլը արդյունաբերական կապիտալիզմի առաջացումն էր, որի հիմքում ընկած էր բանական անհատականությունը: «Ի վերջո այն գործոնները, որոնք ի հայտ բերեցին կապիտալիզմը, իրատեսական ու բանական ձեռնարկությունն էր, բանական հաշվա-

---

[8] Le Grand Larousse en 5 volumes. Tome 2. Paris, 1987. p. 13.
[9] Brown R A., "The Origins of Modern Europe", London, 1972, p. 93.

պահությունը, տեխնոլոգիան ու օրենքը և ոչ միայն դրանք: Անհրաժեշտ լրացուցիչ գործոններ էին անհատի իրատեսական ոգին ու ընդհանուր առմամբ կենսակերպի իրատեսական դառնալը, ինչպես նաև բանական տնտեսական էթիկան»[10],- գրել է Մաքս Վեբերը: Արտադրության կապիտալիստական եղանակը, ըստ էության, հիմք հանդիսացավ ժամանակակից արևմտաեվրոպական քաղաքակրթության ձևավորման համար: Կապիտալը դարձավ բարդ ու անընդհատ կատարելագործվող տնտեսական հարաբերությունների հենասյունը, ինչպես նաև նպաստեց մասնավոր սեփականության իրավական ամրապնդմանը, արտադրողականության բարձրացմանը, անձնական նախաձեռնության, գիտության, տեխնիկայի, գյուտարարության ու արևմտաեվրոպական տնտեսությանը բնորոշ մյուս գործությունների անանխադեպ վերելքին: Կապիտալիզմը հնարավորություններ ստեղծեց արտադրողական ուժերի բուռն զարգացման, անձի ստեղծագործական ներուժի իրացման, հասարակական հարաբերությունների կատարելագործման համար:

Արևմտաեվրոպական քաղաքակրթության պարագայում հետաքրքրական է նաև միասնության ու բազմազանության զուգակցումը: «Նմանության մեջ բազմազանությունը բոլոր արվեստների գաղտնիքներից մեկն է»,- նշել է ֆրանսիացի գրող Անդրե Մորուան[11]: Այն, ինչն ակնհայտ է ու յուրահատուկ Հնդկաստանի, Աֆրիկայի, արաբական երկրների կամ Լատինական Ամերիկայի պարագայում, առավել քան ներհակ է Եվրոպայի համար, որի 47 պետություններում ապրում են բազմաթիվ էթնոսներ ու ազգեր: Թեև եվրոպական ժողովուրդների մեծ մասը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքների երեք մեծ խմբերից որևէ մեկին /գերմանական, ռոմանական և սլավոնական/, նրանցից յուրաքանչյուրը, իր հերթին, բաժանվում է բազմաթիվ ազգություններ՝ իրենց առանձին լեզվով, մշակույթով, սովորույթներով ու ավանդույթներով /ուգրո-ֆիններ, ալբանացիները և բասկերը չեն մտնում վերոնշյալ լեզվաընտանիքների խմբերից ոչ մեկի մեջ/:

Նմանօրինակ բազմազանությունը մեր թվարկության առաջին հազարամյակի կեսերի ժողովուրդների մեծ գաղթի արդյունք է, որի ընթացքում մարդիկ շարժվում էին արևելքից արևմուտք, Ասիայից դեպի Եվրոպա: Այնուհետև սրան զուգահեռվեցին նաև ներեվրոպական միգրացիոն տեղաշարժերը, որոնց արդյունքում ձևավորվեցին մոնոէթնիկ /առավելապես արևմուտքում/ և բազմաէթնիկ /հաճախ արևելքում/ ինքնիշխան պետությունները: Ինքնին «ինքնիշխան պետություն» հասկացությունը հանդիսանում է եվրոպական «հայտնագործու-

[10] Weber Max, "General Economic History", New York, 1961, p. 260.
[11] "Европа вчера, сегодня, завтра", с. 18.

թյուն». այն առաջին անգամ իրավական ձևակերպում է ստացել 1648թ. Վեստֆալյան խաղաղության պայմանագրում, որով ավարտվեց Երեսնամյա պատերազմը:

Եվրոպայի պարագայում խոսքը գնում է ոչ միայն ու ոչ այնքան էթնիկական բազմազանության, որքան հոգեբանական ու մշակութային խայտաբղետության մասին: Բազմաթիվ քաղաքագետներ ու աշխարհաքաղաքական ուսմունքի մասնագետներ, այդ թվում՝ Պ. Քենեդին, Տ. Լաուեն, Դ. Լենդեսը այդ առումով առաջ են քաշել մի թեզ[12], համաձայն որի եվրոպական քաղաքակրթության վերելքը մեծամասամբ բացատրվում է հենց իր կազմի մեջ մտնող մշակույթների բազմազանությամբ. այն մեծ ազդակ է հանդիսացել մրցակցության համար, ինչն էլ նպաստել է շփումների ակտիվացմանն ու փոխադարձ հարստացմանը:

Արդեն երրորդ հազարամյակի շեմին մոլորակի հիմնական տարածաշրջանների միջև ուժերի հարաբերակցությունների խոր փոփոխությունները եվրոպացիներին մղում էին վերագնահատելու իրենց տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ: 1917թ. լույս տեսավ Օսվալդ Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գիրքը[13], ուր հեղինակը ի մի էր բերում երեք հարյուրամյակների ընթացքում ձևավորված «եվրոպակենտրոն» համակարգի արդյունքները՝ հռչակելով համաշխարհային քաղաքակրթության մաս կազմող բոլոր մշակույթների սկզբունքային համահավասարությունը: Միևնույն ժամանակ Շպենգլերը մի այլ ծայրահեղության էր դիմում՝ առհասարակ կասկածի տակ դնելով Եվրոպայի՝ որպես հատուկ քաղաքակրթական կենտրոնի դերը: Ավելին, զուգահեռներ անցկացնելով Եվրոպայի անտիկ ու ժամանակակից մշակույթների միջև, հեղինակը եզրակացնում էր, որ արդի մշակույթը անխուսափելիորեն դատապարտված է անկման ու «մայրամուտի», այնպես, ինչպես ծերությունն ու մահը անխուսափելի են բոլոր կենդանի էակների համար:

Քիչ այլ, սակայն նմանօրինակ տեսակետ էր առաջ քաշում Առնոլդ Թոյնբին: «Պատմության ըմբռնումը» 12 հատորյա հիմնարար աշխատության մեջ, որը լույս է տեսել 27 տարիների ընթացքում /1934-1961թթ./, հեղինակը ձգտում էր վերականգնել բոլոր քաղաքակրթությունների փուլային զարգացման պատկերը, որոնցից յուրաքանչյուրն անցնում է զարգացման հաջորդական փուլեր՝ ծնունդ, վերելք, բարգավաճում, անկում և վախճան[14]: Այդ քաղաքակրթությունները, ըստ Թոյնբիի, 21-ն էին, որոնցից միայն վերջինի՝ «արևմտաքրիստո-

---

[12] Նույն տեղում, էջ 18:

[13] Шпенглер О., "Закат Европы", Очерки морфологии мировой истории, т. I, М., 1993.

[14] А. Дж. Тойнби. "Постижение истории", М., 2004, с. 99-113.

նեական» համար էր բացառություն արվում, որն էլ, նրա կարծիքով, ի վերջո կոչված էր կլանելու բոլոր մնացյալ քաղաքակրթությունների բեկորները:

20-րդ դարի առաջին կեսի ռուս փիլիսոփա և տնտեսագետ Ա. Կոժեվը Ֆ. Ֆուկույամայից շատ առաջ իր տեսակետներն է հայտնել հեգելյան «պատմության ավարտը» հիմնադրույթի առնչությամբ[15] տրամագծորեն հակադրվելով նախորդների կարծիքներին. Կոժեվի համար քաղաքակրթությունների մշտական մրցակցությունը, այնպես, ինչպես մարդկանց, դասակարգերի, ժողովուրդների, հասարակական համակարգերի պայքարը, ժամանակի մեջ չի կարող սահման կամ եզրագիծ ունենալ, քանի որ առանց այդ մրցակցության մարդկությունը դատապարտված է ֆիզիկական ու հոգևոր մահվան:

Ինչ վերաբերում է եվրոպական երկրների միավորման գաղափարներին, ապա դրանք ի հայտ են եկել դեռևս հեռավոր անցյալում, որոնց ջատագովները հիմնականում եղել են հասարակության հոգևոր խավը, ինչպես նաև մասամբ՝ իշխանավորները[16]: Այդ գաղափարների առաջացման հիմնական շարժառիթն այն էր, որ մայրցամաքում այս կամ այն երկրի գերիշխանությունը հաստատելու նպատակով մղվող ավերիչ պատերազմները մեծ կորուստների էին հանգեցնում եվրոպայում: Այդ առումով հիշարժան են Ֆրանսիայի թագավոր Կառլոս Մեծը, Գերմանիայի թագավոր Օտոն I-ը, գրող Դանթեն, Չեխիայի թագավոր Իրժի Պոդեբրադը, հոլանդացի Հուգո Հրոցին, չեխ Յան Ամոս Կոմենսկին, գերմանացի էմերիխ Կրյուսեն և այլոք, որոնք, սակայն, առաջ էին քաշում առավելապես առանձին գաղափարներ, տեսակետներ և ոչ ընդհանուր ու համապարփակ մոտեցումներ: Այդ գաղափարների գերակշիռ մասի արմատները ձգվում էին մինչև Հռոմեական կայսրություն, որի օրինակը դեռևս զգալիորեն ներգործում էր մարդկանց մտքերի վրա, իսկ մշակութային ժառանգությունը ծառայում էր որպես որոշակիորեն միավորող խթան[17]: Բացի այդ, եվրոպական կոնֆեդերացիայի ստեղծման վաղ շրջանի հիմնադրույթների թույլ կողմ էր հանդիսանում այն, որ դրա իրականացումը կախվածության մեջ էր դրվում միապետերի բարի կամքի դրսևորումից: Նման մոտեցման ոչ իրատեսական լինելն ակնհայտ էր, քանի որ պետությունների իրական ազգային շահերը անխուսափելիորեն եվրոպական երկրներին մղում էին մրցակցության ու բախումների: Եվրոպական գաղափարի կողմնակիցների առջև խնդիր ծառա-

---

[15] "Европа вчера, сегодня, завтра", с. 24.

[16] Ա. Հարությունյան, «Եվրոպական Միություն», Երևան, 2005, էջ 11:

[17] Jean-Claude Gautron, "Droit europeen", Paris, 1997, p. 3-6.

ցավ գտնել միավորման այնպիսի ձևեր, որոնք այդ գործընթացը կդարձնեին ոչ թե ցանկալի, այլ անհրաժեշտ[18]:

Առաջադեմ մտածողները, որոնք արդեն այն ժամանակ հանդես էին գալիս անսահմանափակ միապետության դեմ, լուրջ կասկածներ ունեին միահեծանության «արժանիքների» վերաբերյալ[19]: Հայտնի է, որ ժան Ժակ Ռուսոն թեև սկզբունքորեն Եվրոպական Միության կողմնակից էր, բայց ծայրահեղ հոռետեսությամբ էր գնահատում միապետությունների միավորում ստեղծելու հնարավորությունը: Ռուսոյին իր հայացքներով մոտ էր Էմանուել Կանտը: «Դեպի հավիտենական խաղաղություն» աշխատության մեջ նա եվրոպական պետությունների դաշնությունը գնահատում էր որպես խաղաղության ապահովման միջոց, սակայն վերջնական նպատակը, ըստ նրա, հանրապետականության, դաշնապետության և իրավունքի գերիշխանության սկզբունքներով հիմնված միությունների հաստատումն էր[20]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որի արդյունքում Եվրոպան շուրջ կես դար բաժանված էր երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի ազդեցության գոտիների միջև, «եվրոպեսիմիստական» տրամադրությունները էլ ավելի ուժգնացան: Եվրոպական մտավորական վերնախավը ստիպված էր ընտրություն կատարել ոչ միայն հակադիր տնտեսական ու ռազմաքաղաքական, այլև քաղաքակրթական առումով միմյանց անհարիր հասարակական մոդելների միջև: Այդ գաղափարախոսությունների ու հասարակական համակարգերի համատեղման ու մերձեցման փորձերը բախվում էին «սառը պատերազմի» կարծր տրամաբանությանը: Ֆաշիստական Գերմանիայի ջախջախման ու «սառը պատերազմի» մեկնարկի իրողությունը Արևմտյան Եվրոպայի առավել հեռատես գործիչների համար ակնհայտ դարձրեց այն, որ առանց ներքին լուրջ փոփոխությունների հազիվ թե հնարավոր լինի պահպանել ավանդական հասարակական համակարգը: Եվ այդ փոփոխությունները կյանքի կոչվեցին: Արևմտյան Եվրոպայի առանձին երկրներում դասակարգային հակասությունները մեղմելու միջոցներ հանդիսացան արագ տնտեսական աճը, քաղաքական կյանքի ամբողջական ժողովրդավարացումը ու մարդու իրավունքների իրական ու արդյունավետ պաշտպանությունը: Պետությունների միջև տնտեսական և քաղաքական ճգնաժամերի հաղթահարման հիմնական միջոց դարձավ եվրոպական ինտեգրումը: Հարկ է նաև նկատի ունենալ, որ եվրոպական ինտեգրումն այն տեսքով, որով այն իրապես գոյություն ունի,

---

[18] В. Г. Шемятенков, "Европейская интеграция", М., 2003, с. 18-21.
[19] Ա. Հարությունյան, «Եվրոպական Միություն», էջ 13.
[20] Kant Immanuel, "Perpetual Peace", London, 1795.

հազիվ թե կարող էր առաջանալ երկրագնդի որևէ այլ մասում: Նրա բացառիկությունը բացատրվում է արևմտաեվրոպական քաղաքակրթության յուրահատկությամբ, որն իր հերթին պատմական զարգացման ու առանձնահատուկ բնական պայմանների արդյունք է: Իսկ «ինտեգրում» հասկացությունն ինքնին սահմանվում է իբրև «շուկայի միասնության արտահայտություն, շուկա, որի ներսում չկա որևէ խոչընդոտ ապրանքների, կապիտալի և մարդկանց տեղաշարժերի համար, որում հնարավոր է ազատորեն տնօրինել արժեքները և ներդրումներ կատարել հաշվի առնելով առավել շահութաբերությունը, շուկա, որում գերիշխում է աշխատուժի ազատ տեղաշարժը»[21].

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Եվրոպայի միավորման փորձերը, որոնք ձեռնարկվում էին գրեթե տասներկու դարերի ընթացքում, անարդյունք էին ոչ թե այն պատճառով, որ դրանց հիմքում ընկած էին անկատար ծրագրեր, այլ այն, որ դրա համար գոյություն չունեին օբյեկտիվ նախադրյալներ: Դեռևս 1849թ. օգոստոսի 21-ին, հանդես գալով Փարիզում կայացած վեհաժողովում, Վիկտոր Հյուգոն նշել է. «Կգա այն օրը, երբ մենք երկու վիթխարի միությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Եվրոպայի Միացյալ Նահանգների ականատեսը կլինենք, որոնք ... հանուն համընդհանուր բարօրության համադրում են երկու անսահման ուժեր՝ մարդկանց եղբայրությունը և Աստծո զորությունը»[22]: Այդպիսով, ինտեգրման հիմքում ի սկզբանե դրվել են արևմտաեվրոպական հանրության այդ ժամանակվա կուտակած այնպիսի «ակտիվներ», ինչպիսիք են ձևավորված իրավական պետությունը, ժողովուրդների համագոյակցության մշակութային ու շատ դեպքերում կրոնական ընդհանրությունը, «եվրոպական գաղափարի» ավանդույթները և, ի վերջո, Առաջին ու Երկրորդ համաշխարհային պատերազմների դառը դասերն ու փորձը: Դրա տրամաբանական արդյունքը նաև խաղաղության ու միավորման գաղափարների, համաեվրոպական նախագծերի ի հայտ գալն էր: Այդպես եղավ և՛ Հարյուրամյա ու Երեսնամյա պատերազմների հեռավոր դարաշրջաններում, և՛ 20-րդ դարի սկզբին:

Այդպիսով, 20-րդ դարի 40-ական թվականների վերջերին ձևավորվեցին այն օբյեկտիվ նախադրյալները, որոնք հնարավորություն ընձեռեցին կյանքի կոչել եվրոպական միասնության՝ դարերի խորքից եկող գաղափարները: Այդ առումով պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

---

[21] M. Allais, "L'Europe Unie. Route de la Prosperite", Paris, 1960, p. 19

[22] Борко Ю.А., Загорский А.В., Караганов С.А., "Общий Европейский Дом: что мы о нем думаем?", М., 1991, с. 43.

• Մի կողմից ստեղծումն ու արարումը, մյուս կողմից՝ կործանումն ու ոչնչացումը իրենց գագաթնակետին էին հասել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Կործանման ներուժը, որի զոհասեղանին դրվեցին գիտության ու տնտեսության լավագույն նվաճումները, վերածվեց ինքնաբայքայման ներուժի: Այդ հանգամանքն ակնհայտ դարձրեց այն սպանդը, որը շուրջ հիսուն միլիոն մարդու կյանք խլեց: Եվրոպայի ժողովուրդները, հատկապես հակամարտ պետությունների Գերմանիայի ու Ֆրանսիայի բնակչությունը պատերազմից դուրս եկան իրենց պետությունների «կույր եսասիրությանը» այսուհետ տուրք չտալու անխախտ ձգտումով, սեփական մայրցամաքում պատերազմն առհավետ բացառելու մեծ ցանկությամբ: Թեև մասնավոր սեփականությունը մնաց իբրև Արևմտյան Եվրոպայի կենսական հենասյուներից մեկը, պատերազմը դադարեց «մարդկության բնականոն իրավիճակ» համարվել: Հրթիռամիջուկային զենքի ի հայտ գալն առհասարակ անիմաստ դարձրեց ցանկացած բնույթի պատերազմ: Այդ կերպ «եվրոպական գաղափարի» իրականացմանը խոչընդոտող հիմնական արգելքը վերացվեց:

• Արմատական փոփոխություններ տեղի ունեցան մասնավոր սեփականության ներուժի ոլորտում, ինչպես նաև արտադրության կապիտալիստական ձևի մեջ: Դեռևս մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը ազգային շուկաների շրջանակները չափազանց սահմանափակ էին տարանջատ արտադրական ուժերի համար: Դրանց հետագա աճը ենթադրում էր արտադրության և կապիտալի համընդհանուր միջազգայնացում: Սակայն համաշխարհայնացման զարգացումն ու խորացումը դանդաղում էր ազգային շուկաների սահմանափակվածության, պետությունների պաշտպանական քաղաքականության ու դրանց տնտեսական և քաղաքական սուր մրցակցության պատճառով: Այդօրինակ հակասության վառ արտահայտությունը 1930-ական թվականների տնտեսական խոր ճգնաժամն էր: Ֆաշիզմն այդ ճգնաժամից դուրս գալու ելքը գտավ կորպորատիվ կապիտալիզմի և տնտեսության բնագավառում պետական խիստ միջամտության սկզբունքի որդեգրման մեջ: Դա հնարավորություն տվեց տնտեսական հենք նախապատրաստել ժամանակակից զինատեսակների զանգվածային արտադրություն կազմակերպելու և Եվրոպայում ու Ասիայում ագրեսիվ բնույթի պատերազմներ սանձազերծելու համար: Ժողովրդավարական երկրներն ընդհուպ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը այդպես էլ չկարողացան որևէ կերպ հակազդել պետությունների տնտեսական «եսակենտրոնությանը»: Կարծիք հնչեց, որ «ընդհանուր արժույթով և ողբերգական, սակայն արդեն անցյալի գիրկն անցած պատմությամբ, միավորված քաղաքական ու տնտեսական միությունը

համաշխարհային քաղաքականությունում կարող է ունենալ ոչ պակաս կշիռ, քան Ամերիկայի Միացյալ Նահանգները»[23]: Մեկ այլ տեսակետի համաձայն «մոտ 400 միլիոն սպառողով շուկային ապավինող միացյալ Եվրոպան կօժտվի տնտեսական քաղաքականությունը զարգացնելու կարողությամբ: Սանձազերծված համապարփակ կապիտալիզմի պայմաններում, միայն միացյալ Եվրոպան կկարողանա սահմանել նոր կանոններ, որոնք կապահովեն ավելի մեծ սոցիալական հավասարակշռություն»[24]: 1950-ական թվականների տնտեսական ինտեգրումը հնարավորություն տվեց լուծել մինչ այդ գոյություն ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներ: Արդյունքներն իրապես ակնառու էին:

- Միայն 20-րդ դարի կեսերին ավարտվեց արևմտաեվրոպական քաղաքական ժողովրդավարության կայացման երկարատև ու բարդ գործընթացը: Քաղաքացիական հասարակությունը աննախադեպ զարգացում ապրեց ներառելով մարդկանց կամավոր հիմունքներով միություններ կազմելու մշակույթի ձևավորումը, փոխզիջումների հասնելու ձգտումը, օրենքի գերակայության հաստատումը, հասարակական հարաբերություններում փոխադարձ վստահության ամրապնդումը: Դասակարգային պայքարին փոխարինելու եկավ հասարակական համերաշխությունը, որի նյութական արտահայտությունը դրսևորվեց համընդհանուր բարեկեցության պետության ստեղծման մեջ: Կարելի է վստահաբար ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորվեց եվրոպացու «գենոտիպը» զերծ ազգայնականությունից ու պատրաստ համագործակցելու այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Դեռևս 1949թ. ապրիլին ֆրանսիացի հասարակական գործիչ Ժան Մոնեն բացատրել է, որ «այդ ժամանակաշրջանում Արևմտյան Եվրոպան գտնվել է վակուումում, որի կողմերում եղել են երկու հզոր շարժիչ ուժեր՝ կոմունիզմը և ամերիկյան կապիտալիզմը: Այդ բացը կարելի էր լրացնել կամ այդ արտաքին ուժերից որևէ մեկի միջոցով, կամ էլ՝ երրորդ ուժի զարգացմամբ, այսինքն՝ վառ արտահայտված «արևմտաեվրոպական կենսակերպով»[25]: Հենց մարդկային այդ տեսակը դարձավ այն «առաջնային գործոնը», որը հնարավորություն տվեց կյանքի կոչել եվրոպական ինտեգրման գաղափարը: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ Եվրոպան 20-րդ դարում չընդունեց սահմանադրական արդարադատության ամերիկյան մոդելը՝ փոխարենը զարգացնելով սեփականը[26]:

---

[23] Grilli Enzo, "The European Community and the Developing Countries", Cambridge Univ. Press, Cambridge, 1993.
[24] Мартин Ганс-Петер, Шуман Харальд, "Западня глобализации", М., 2001, с. 17-30.
[25] Christopher Coker, "Twilight of the West", New York, 1996, p. 114.
[26] Գ. Հարությունյան, «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները», Երևան, 2005, էջ 231:

• Արևմտաեվրոպական ժողովուրդների համախմբման համար հզոր գործոն էր խորհրդային ռազմական վտանգի հանդեպ վախը: Ինչպես նշել է բելգիացի քաղաքական գործիչ Պոլ-Անրի Սպաակը «Եվրոպական պետական գործիչներից շատերին անվանել են «Եվրոպական միասնության հիմնադիր-հայրեր» ... Նրանցից ոչ ոք արժանի չէ այդ տիտղոսին այն պատկանում է Ստալինին»[27]: Հենց սառը պատերազմի տրամաբանությունը ստիպեց ԱՄՆ-ին աջակցել ինտեգրման նախագծին այդ կերպ ինչ-որ չափով կանխելով ԽՍՀՄ-ի դեպի Եվրոպա առաջխաղացումը:

Հետպատերազմյան Եվրոպայի քաղաքական ու մտավորական ընտրախավը պետք է ձևակերպեր ու տար այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս և հանուն ի՞նչ նպատակների պետք է իրականացվի ինտեգրումը Եվրոպայում:

Միացյալ Եվրոպայի կառուցման վերաբերյալ ձևավորվեցին քաղաքական ու իրավական մտքի երեք հիմնական ուղղություններ[28]: Առաջին ուղղության հեղինակները դաշնապետության կողմնակիցներն էին, այսինքն՝ համաեվրոպական միութենական պետության ստեղծման ջատագովները: Երկրորդ ուղղությունը ներկայացվել էր եվրոպական պետությունների սերտ համագործակցության /մասնավորապես տնտեսական և ռազմաքաղաքական ոլորտներում/ օգտին հանդես եկող, սակայն Եվրոպայի դաշնապետականացման դեմ վճռականորեն առարկող քաղաքական ուժերի կողմից: Այդ դիրքորոշումը պաշտպանում էր Մեծ Բրիտանիան, քանի որ, լինելով ԱՄՆ-ի հետ սերտ հարաբերությունների մեջ, այդ երկիրը հնարավոր չէր համարում դաշնապետական կառույցում իր երկրի մասնակցությունը:

Ի վերջո, երրորդ ուղղությունը ներկայացվել էր ըստ էության միջանկյալ դիրքորոշում գրված քաղաքական ու հասարակական գործիչների, նշանավոր գիտնականների և գաղափարախոսների կողմից, որոնք ենթադրում էին, որ Եվրոպայում ստեղծվող ինտեգրման միավորումները պետք է զուգակցեն ինչպես պետաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական կազմակերպության տարրեր: Ինչ-որ առումով դա փոխզիջումային տեսակետ էր, որը թույլ էր տալիս զուգորդել առաջին երկու ուղղությունների դիրքորոշումները: Այդ ուղղությունն էլ տիրապետող դարձավ և դրվեց այն պայմանագրային ակտերի հիմքում, որոնցով ձևակերպվեց Քարածխի ու պողպատի եվրոպական համայնքի, իսկ հետագայում՝ Եվրոպական համայնքների ստեղծումը[29]:

---

[27] Heater D., The Idea of European Unity, London, 1992, p. 150.
[28] Ա. Հարությունյան, «Եվրոպական Միություն», էջ 23:
[29] http://europe.eu.int/abc/treaties-en.htm